

U 11
2667

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԼԻԼԻԹ ՎԱՇԵԻ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՈՐՊԵՍ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԺՔ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МЕЛИКСЕТЯН ЛИЛИТ ВАГЕЕВНА

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ ИНСТИТУТА РЕФЕРЕНДУМА КАК
ФОРМЫ НЕПОСРЕДСТВЕННОГО НАРОДОВЛАСТИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – “Общественное право– конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление

ЕРЕВАН - 2020


Մեղ-Ներ

**Ատենախոսության թեման հաստատվել է
«Պետական կառավարման ակադեմիայում**

- Գիտական ղեկավար՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Բ. Դանիելյան**
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝** իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ռ. Զ. Մախմուդյան**
- Առաջատար կազմակերպություն՝** «Գիտությունների ազգային ակադեմիա»

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի ապրիլի 2-ին ժամը 14³⁰-ին, «ԲՈԿ-ի» Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1): Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2020 թվականի փետրվարի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոց.  **Ս. Տ. Սուրջյան**

**Тема диссертации утверждена в
Академии государственного управления РА**


- Научный руководитель:** доктор юридических наук, профессор **Г. Б. Даниелян**
- Официальные оппоненты:** доктор юридических наук, профессор **В. В. Степанян**
кандидат юридических наук, доцент **Р. Дж. Махмудян**

Ведущая организация: **Национальная академия наук РА**

Защита диссертации состоится 2-ого апреля в 14³⁰ на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 21-ого февраля 2020 г.

Ученый секретарь специализированного совета: кандидат юрид. наук, доцент  **Т. О. Суджян**

11-2667

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Արդի դարաշրջանում, թերևս, ակնհայտ է ներպետական հարթությամբ՝ ներկայացուցչական կառավարման, իսկ վերպետական հարթությամբ վերպետական միջազգային կառույցների գործունեությունում որոշակի բարդությունների, առանձին դեպքերում՝ նաև ձախողումների ի հայտ գալը, ընդ որում, համալիր վերլուծությունը վկայում է այն մասին, որ անգամ առաջադեմ ու ժողովրդավար երկրներում ձևավորված կառուցակարգերն ի զորու չեն ամբողջությամբ ու համալիր լուծում տալ իրենց առջև ծառայած հրատապ հիմնախնդիրներին: Ձևավորված հիմնական կառուցակարգերի ու ընթացակարգերի ոչ բավարար կենսունակությունը, մասամբ էլ դրանց խոցելիությունը նկատելի դարձավ նաև 2018 թվականին Հայաստանում ընթացող քաղաքական իրադարձությունների համատեքստում, մասնավորապես, համաժողովրդական շարժումը առաջադրեց այնպիսի ինքնատիպ պահանջներ, որոնք որևէ կերպ չէին կարող իրենց համարժեք լուծումը գտնել առկա քաղաքական-իրավական համակարգի գործադրմամբ: Ակնհայտ է, որ հանրային իշխանության մարմիններից դժգոհությունը ոչ միայն ուղղված է ցանկալի որոշումների կայացմանը, այլև մեր օրերում առավելապես դրսևորվում է անմիջականորեն որոշումներ կայացնելու միտումների աննախադեպ աճով:

Ընդհանրապես, անմիջական ժողովրդաիշխանության պակասը ծնում է պետական իշխանության անվերահսկելիության ու անպատասխանատվության կայուն ու պայթյունավտանգ մթնոլորտ, որի հաղթահարման հիմնական միջոցներն են ժողովրդի՝ որպես պետականության կրողի կոչումն իրական դարձնելը, ժողովրդաիշխանության անմիջական ու ներկայացուցչական ձևերի ներդաշնակ հավասարակաշռության հաստատումը: Արդի աշխարհին բնորոշ օրինաչափություններից մեկն էլ անընդհատ թվայնացումն ու էլեկտրոնայնացումն է, առաջ են գալիս էլեկտրոնային կառավարման նոր հայեցակարգեր, ինչը մի կողմից նպաստում է անմիջական ժողովրդաիշխանությանը, մյուս կողմից՝ նվազեցնում է հանրային իշխանություն և անհատ «կենդանի» կապը, ինչը հաճախ սոցիալ-հոգեբանական բացասական դրսևորումներ է ունենում: Այս նորույթը պահանջում է անմիջական ժողովրդաիշխանության վերաիմաստավորում՝ ձևավորված քաղաքական-իրավական, սահմանադրական տեսությունների լույսի ներքո: Էլեկտրոնային քվեարկությունը նոր հորիզոններ է բացում հանրաքվեի կիրառման համար: Ընդ որում,

հանրային նկատելի պահանջարկի առկայության պայմաններում, այս նոր էական իրողությունների համատեքստում անմիջական ժողովրդախիշխանության հիմնահարցերը համալիր հետազոտության նյութ դեռևս չեն դարձել:

Հետազոտության թեմայի արդիականության ևս մեկ կողմ առնչվում է հանրաքվեի նկատմամբ տեսական նիհիլիզմի դրսևորումներում, մասնավորապես տեսաբաններից շատերն առաջարկում են «չանցնել չափը», չնսեմացնել ներկայացուցչական կառավարումը: Սկզբունքորեն կարելի էր և համաձայնվել այդպիսի մոտեցումների հետ, եթե պատմությունը ցույց չտար, որ ինքը՝ ներկայացուցչական կառավարումն է (պետությունն ընդհանրապես) միշտ անցնում չափը, սահմանը, ինքն իրեն վերածում անվերահսկելի, «ինքնաբավ» համակարգի՝ շեղվելով ընդհանուր հասարակական և պետական շահերից: Տեսաբանների գնահատմամբ այս միտումը կանխելու միջոցն անմիջական կառավարման ձևերի նպատակասլաց, որակական աճն ու բարելավումն է: Այս կապակցությամբ ևս ծագում է առաջադրված պահանջներին համահունչ անմիջական ժողովրդախիշխանության համակարգ ձևավորելու հրատապ խնդիր:

Առենախոսության նպատակը երկմիասնական բնույթ ունի: Հանրաքվեն որպես սոցիալական երևույթ (ինստիտուտ) դիտարկելու մեթոդաբանական մոտեցումներից է բխում հետազոտության **առաջին** ենթանպատակը՝ վեր հանել այդ երևույթի ձևավորման էվոլյուցիան, միտումները, դրա «ճակատագիրը» հասարակական կառավարման համակարգում, պատմական և տեսական օրինաչափությունների հիմքով կանխատեսել հանրաքվեի՝ որպես ժողովրդախիշխանության ձևի ապագան: Այս համատեքստում ձևավորվում է **երկրորդ** ենթանպատակը՝ պարզել այդ երևույթի դրսևորման օրինաչափ առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, հիմքում ունենալով հայրենական օրենսդրությունը, սոցիալ-հոգեբանական բաղադրիչները, պրակտիկան և այլն:

Հետազոտության առարկան ներառում է համաշխարհային մասշտաբով հանրաքվեի՝ որպես սոցիալական ինստիտուտի առաջացման, փոխակերպման, որպես սահմանադրական իրավական ինստիտուտի ձևավորման իրավական պատմության, այդ գործընթացներին բնորոշ օրինաչափությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև ՀՀ-ում հանրաքվեի՝ որպես սահմանադրական իրավական ինստիտուտի ամրագրման, օրենսդրական հարթությամբ իրացման արդի վիճակի ուսումնասիրությունը:

Հետազոտության խնդիրները բխում են ուսումնասիրության նպատակներից և համահունչ են դրանց: Մասնավորապես, հանրաքվեն, դիտարկելով որպես սոցիալական երևույթ և իրավական ինստիտուտ՝ խնդիր է դրվել լուծելու հետևյալ տեսական ու գործնական հիմնահարցերը.

ա) տարբերակել հանրաքվեն, որպես սոցիալական և սահմանադրական իրավական ինստիտուտ, փորձել պարզել դրանցից յուրաքանչյուրի ժամանակագրական ծագումնաբանությունը և այդ համատեքստում ունեցած դերը,

բ) հիմք ընդունելով «հանրաքվեն, որպես մարդկության պատմության ընթացքում նրան մշտապես ուղեկցող սոցիալական երևույթ» կանխադրյալը՝ բացահայտել այն դիրքորոշումը, որ Շվեյցարիան ոչ թե բուն հանրաքվեի, այլ համանուն սահմանադրական իրավական ինստիտուտի հայրենիքն է, ինչն էլ անհրաժեշտ նախապայման է միջազգային փորձի վերաիմաստավորման կտրվածքով,

գ) դիտարկելով հանրաքվեն նոր և նորագույն դարաշրջանում որպես վերածնված սահմանադրական ինստիտուտ, բացահայտել դրա՝ որպես անմիջական ժողովրդախիշխանության ինքնուրույն ձևի արդի հեռանկարային միտումները,

դ) համապատասխան տեսական գրականության ուսումնասիրության միջոցով պարզել հանրաքվեի արդյունավետության ու գործունեության իրավական չափանիշների շրջանակը, որը միջոց է ծառայելու հանրաքվեի ինստիտուտի գոյության յուրաքանչյուր փուլի օրենսդրական հիմքերի գնահատման համար,

ե) հետազոտելով անկախության հռչակման պահից մինչև մեր օրերն ընդունված և գործած հանրաքվեին վերաբերող օրենսդրությունը՝ կառուցել դրա փուլայնության համարժեք հայեցակարգ՝ որպես հետազոտության առարկայի երկրորդ տարրի հետազոտության մեթոդաբանական նախադրյալ,

զ) ուսումնասիրել համազգային և տեղական հանրաքվեների իրավական ինստիտուտների էական առանձնահատկությունները, վեր հանել դրանց գոյության ու գործողության փուլերը, բնորոշ գծերը, ըստ նախապես որոշված էական-բովանդակային չափանիշների՝ գնահատել դրանց նորմատիվ արդյունավետության աստիճանը,

է) գնահատել հանրաքվեի վերաբերյալ ՀՀ նոր օրենսդրությունը և առաջարկել հասարակական այդ հարաբերությունների կարգավորման բարեփոխման առավել համակարգային ու առանցքային առաջարկություններ:

Թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը: «Հանրաքվեի» որպես իրավական ինստիտուտի տեսական և գործնական հիմնահարցերը, ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական իրավագիտության մեջ բազմաթիվ անգամ դարձել են հետազոտման առարկա: Եվրոպական իրավագիտությունում հանրաքվեի հետազոտությունն արդիական էր սկսած պատմության նոր և նորագույն շրջանից, իսկ խորհրդային իրավագիտությունը միայն 1936 թ. Սահմանադրության ընդունումից հետո սկսեց քննարկման առարկա դարձնել հանրաքվեի որպես ինստիտուտի տեսական հիմնահարցերը: Խորհրդային սահմանադրական պրակտիկայում, սակայն, հանրաքվեի հիմնահարցն արդիականացվեց միայն խորհրդային հանրապետությունների անկախացման շրջանում, երբ բացի իրավական ամրագրումից, հետխորհրդային տարածքում առաջ եկավ հանրաքվեների նշանակման և անցկացման փորձը: Հանրաքվեի ինստիտուտի գործնական կիրառումը խթանեց գիտագործնական հետաքրքրությունը դրա նկատմամբ, պրակտիկայի ուղղակի ազդեցության շնորհիվ արդիականացվեց նաև հանրաքվեի տեսությունը: Այդ պահից մինչև մեր օրերն իրականացվել են բազմաթիվ քաղաքագիտական և իրավագիտական հետազոտություններ՝ նվիրված հանրաքվեի ինստիտուտին՝ ինչպես ատենախոսական հետազոտություններում, այնպես էլ՝ մենագրություններում: Այդ հետազոտություններում հանրաքվեն դիտարկվում է որպես նոր և նորագույն շրջանի սահմանադրական իրավական ինստիտուտ: Այսպես, Վ.Վ. Կոմարովան ատենախոսության հետազոտման առարկա է դարձրել հանրաքվեի ինստիտուտի տեղը և դերը ժողովրդաիշխանության համակարգում և կենսագործման կառուցակարգում՝ ՌԴ-ի օրինակով: Գ.Վ. Սինցովն իր դոկտորական ատենախոսության հետազոտման առարկայի շրջանակում ներառել է աշխարհի երկրների օրենսդրության մեջ հանրաքվեի ինստիտուտի ամրագրման և կենսագործման տեսական հարցերը, դրա արդի վիճակը և զարգացման միտումները:

Այս և մնացած բոլոր հետազոտություններն աչքի են ընկնում որոշակի ընդհանրություններով, մասնավորապես, դրանցում հանրաքվեն որպես հետազոտման օբյեկտ և առարկա դիտարկվել է նոր դարաշրջանի անմիջական ժողովրդաիշխանության ձև, ինչպես նաև սահմանադրական իրավական ինստիտուտ:

Ատենախոսության տեսական հիմքերը պայմանավորված են հետազոտության նպատակի ու առարկայի երկտարր կառուցվածքով: Առաջին նպատակին

տակին հասնելու համար հիմք են հանդիսացել հանրաքվեի որպես ինստիտուտի իրավական պատմության հարցերը հետազոտած հեղինակների աշխատությունները, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց բոլորի մոտեցումների հիմքում ընկած է գերմանացի հետազոտող Ֆ. Կուրտի հանրաքվեի պատմության ուսումնասիրությունը, որում հանրաքվեի հայրենիք է դիտարկվում Շվեյցարիան, իսկ դրա ծագման ժամանակը՝ 15-րդ դարը:

Քանի որ հետազոտության մեթոդաբանական մոտեցումներից է հանրաքվեի որպես սոցիալական երևույթի և սահմանադրական իրավական ինստիտուտի տարբերակումը, ապա հանրաքվեի ծագման, պատմական գործընթացներում ձևափոխման հիմնահարցերի հետազոտման ու պարզաբանման համար տեսական կարևոր նշանակություն են ունեցել քաղաքականության, պետության, ժողովրդավարության առաջացմանը և զարգացմանը նվիրված հետազոտությունները:

Բուն հանրաքվեին՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտի նվիրված հետազոտություններից տեսական հիմք են ծառայել արևմտյան, խորհրդային, հետխորհրդային մի շարք սահմանադրագետների աշխատությունները: Դրանք հատկապես արժեքավոր են եղել հանրաքվեի տեսության մի շարք հարցերում մեթոդաբանական մոտեցումների ձևավորման համար: Հանրաքվեի՝ արտասահմանցի տեսաբանների աշխատությունների կողմնորոշիչ նշանակությունը շատ կողմերով սահմանափակ էր, քանի որ դրանք հիմնականում նվիրված են «սեփական» հանրաքվեի ինստիտուտի վերլուծությանը կամ էլ համաշխարհային մասշտաբով հանրաքվեի ինստիտուտի կիրառման պրակտիկային: Այդ պատճառով կարևորվել են հայ իրավագետների հետազոտությունները՝ նվիրված հայկական իրականության մեջ հանրաքվեի հետազոտությանը: Դրանցից աչքի է ընկնում Ռ. Մարանդյանի թեկնածուական ատենախոսությունը, որում հեղինակն արձարձել է հանրաքվեի էության, տեսակների, այդ ինստիտուտի զարգացման ուղղությունների, հանրաքվեի և ժողովրդաիշխանության այլ ձևերի հարաբերակցության, հանրաքվեին մասնակցելու իրավունքի սահմանափակման, հանրաքվեի կազմակերպման և անցկացման հարցերը: Այս հարցում իր ներդրումն ունի Գ. Դանիելյանի հոդվածը, որը պատրաստվել է վերջին փուլի սահմանադրական բարեփոխումների ընթացքում:

Հետազոտության էմպիրիկ-նորմատիվ հիմքը հանրաքվեին վերաբերող ՀՀ օրենսդրությունն է (այդ թվում, նախկինում գործած), այլ պետու-

յունների սահմանադրությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների խորհրդատվական որոշումները, սահմանադրական դատարանի պրակտիկան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքեր են ծառայել գիտական ճանաչողության արդի մեթոդներն ու մոտեցումները, ինչպես նաև հանրային կառավարման ու դրա ծագման, սահմանադրական իրավունքի տեսությունները:

Գիտական հետազոտության արդի մեթոդներից օգտագործվել են հատկապես դիալեկտիկական մոտեցումը, պատմական և տրամաբանական մոտեցումների զուգակցված կիրառումը, համակարգային, ձևական-իրավական, համեմատական-իրավական, ինչպես նաև ընդհանուր և մասնավոր գիտական հետազոտության մեթոդները: Լայնորեն կիրառվել է նաև ձևականացված իրավական չափանիշների վիճակագրական-մաթեմատիկական մոդելավորման մեթոդը:

Ատենախոսության գիտական նորույթը հետազոտությանն առարկայի նկատմամբ նոր տեսական-իրավական մոտեցումներն են, ինչպես նաև առաջին անգամ հանրաքվեի որպես սոցիալական և իրավական ինստիտուտների՝ դրանց ծագման, հարաբերակցության, փոխակերպման համալիր ուսումնասիրությունը: Այդ հիմքով կատարված հետազոտության մեջ առաջին անգամ՝

1) հանրաքվեն դիտարկվել է ոչ թե որպես նոր դարաշրջանի իրավական ինստիտուտ, այլ մարդկության պատմության ընթացքում միշտ նրան ուղեկցող և բնորոշ երևույթ,

2) կատարվել է կանխատեսում ապագայում հանրաքվեի զանգվածային և պարբերաբար կիրառման հնարավորության վերաբերյալ,

3) առանձնացվել են Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի ինստիտուտի իրավական պատմության գիտական չափանիշների վրա կառուցված փուլերը և կանխորոշվել են դրանց բնորոշ գծերը,

4) ուսումնասիրվել է հանրաքվեի իրավական ինստիտուտի սահմանադրական իրավական պատմությունը՝ ըստ առանձնացված փուլային բաժանման:

Կատարված սահմանադրաիրավական հետազոտությունը թույլ է տվել ձևակերպել և պաշտպանության ներկայացնել գիտական նորույթ հանդիսացող կամ դրա տարրեր պարունակող հետևյալ եզրակացությունները և հիմնական դրույթները.

1. Հանրաքվեն մարդկային հասարակության սոցիալական կառավարման անկյունքարային նախադրյալն ու եղանակն է. վերջինիս նախադրյալ-

ները ոչ թե դրա՝ որպես իրավական ինստիտուտի կայացման սաղմերն են, այլ մարդկության վաղնջական պատմության շրջանում, կառավարման և հանրային գործերի լուծման անմիջական համակարգերը: Նախնադարյան կառավարումը «նախնադարյան ժողովրդավարական» ուղղակի կառավարման համակարգ էր, որում իրենց հիմնարար տեղն ունեին, օրինակ՝ հանրաքվե հիշեցնող ժողովները: Հանրաքվեն ոչ թե մարդկության նոր շրջանի հայտնագործություն է, այլ հասարակությանն ի սկզբանե բնորոշ սոցիալական ինստիտուտ, որը վերածնվեց նոր դարաշրջանում արդի ժողովրդավարական պատկերացումներին համապատասխան:

2. Ներկայացվել են Շվեյցարիան, որպես հանրաքվեի հայրենիք համարելու իրավաբանական նոր փաստարկներ, որոնք գիտագործական տեսանկյունից անհրաժեշտ են ընդհանրապես հանրաքվեի էությունը, կոնկրետ իրավիճակում ծագելու և տարածվածության աստիճանը համարժեք գնահատելու տեսանկյունից:

3. Հանրաքվեի իրավական ամրագրման համալիր վերլուծության արդյունքներով հիմնավորվել է հետևյալ օրինաչափությունը. արդի հասարակության մեջ նկատվում է անմիջական ժողովրդավարության ձևերի, ներառյալ հանրաքվեի սահմանադրական ամրագրման շրջանակների ընդլայնում, կիրառման ինտենսիվության աճ, դրա բովանդակության էական ժողովրդավարացում: Այս օրինաչափությունը թելադրված է երկու հիմնական գործոններով՝ ա) վերաբեռական միջազգային կազմակերպությունների պարագայում հնարավոր արտաքին ազդեցությունները ողջամտորեն մեղմելը և բ) ներաբեռական կառավարման ոլորտում սոցիալական անհարկի դժգոհությանը, որպես հակակշիռ առաջադրելու միտումը:

4. Հայաստանում հանրաքվեների փորձի ուսումնասիրության արդյունքներով համակարգված ներկայացվել են Հայաստանում այդ ինստիտուտի սակավ կիրառման հիմնական պատճառները՝ 1) իրավաբանական համարժեք մշակույթի բացակայություն, քաղաքացիական հասարակության ձևավորման հարցում թույլ առաջընթաց, բ) քաղաքացիական նախաձեռնության կտրվածքով օրենսդրությամբ նախատեսված խոչընդոտներ, գ) իշխանության անհարկի կենտրոնացում, ինչը ոչ միայն խաթարում է իշխանության ճյուղերի բաժանման սկզբունքի, այլև անմիջական ժողովրդաիշխանության իրացման բնականոն գործընթացը. դ) տարածաշրջանային բարդ խնդիրների առկայություն, որոնց առնչությամբ ակնկալվող հանրաքվեները տևական ժամանակով ձգձգվելով հանդերձ, բացասական ազ-

դեցություն են ունենում այլ հարցադրումների առնչությամբ հանրաքվեների նկատմամբ ընդհանուր ընկալումների վրա, ե) անմիջական ժողովրդաիշխանության մյուս եղանակների, անգամ սոցիոլոգիական հարցումների արդյունքների նկատմամբ ձևավորված անվստահությունը և գ) միջազգային կառույցների կողմից անմիջական ժողովրդաիշխանության նկատմամբ ոչ միանշանակ դիրքորոշումները:

5. Սահմանադրության 2015 թ. փոփոխությունները, նկատելի դրական առաջընթացի հետ մեկտեղ, համալիր լուծում չեն տվել հանրաքվեի ինստիտուտի կայացման խնդիրներին: Մասնավորապես, հանրաքվեի արդյունավետության և կիրառելիության բուն չափանիշների հարցում այն առաջընթաց չի գրանցել, քանի որ դարձյալ առաջադրվել են այդ ինստիտուտի բնականոն ընթացքը խաթարող հիմքեր,:

Միաժամանակ, առանձնացվել են այն իրավական նորամուծությունները, որոնք, ըստ հեղինակի, կարող են նախադրյալ հանդիսանալ հետագա բարեփոխումների համար, մասնավորապես, նշվել է, որ ընդլայնվել է հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը, մասամբ որոշակիացվել են հանրաքվեի սահմանադրական կարգավորման նորմերը, վերանայվել է նախաձեռնող սուբյեկտների շրջանակը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել սահմանադրական իրավունքի, հանրային կառավարման, իրավունքի պատմության դասընթացներում և այդ հարցադրումներին առնչվող գիտական հետազոտություններում: Դրանք կարող են նպաստել նաև հանրաքվեի իրավական ինստիտուտին ուղղված իրավաստեղծ աշխատանքին, դրա իրավական կարգավորման հետագա կատարելագործմանը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են թեմայի արդիականությունը, հետազոտության մշակվածության աստիճանը, տեսական հիմքը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, իրավական, փորձառական, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը:

«Հանրաքվեի որպես սահմանադրական իրավական ինստիտուտի զարգացման համաշխարհային միտումները XX-XXI դարերում» վերտառությունը կրող 1-ին գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հանրաքվեի սոցիալական ու իրավական բաղադրիչները պետաիրավական մշակույթի պատմության համատեքստում» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հանրաքվեն ուսումնասիրվել է որպես սոցիալական և իրավական ինստիտուտ:

Հանրաքվեն՝ որպես իրավասուբյեկտ քաղաքացիների կողմից հասարակական նշանակություն ունեցող հարցերի լուծման ձև, գոյություն է ունեցել և ունի մի քանի մակարդակներում՝ որպես հասարակական ինստիտուտ, որպես սահմանադրական իրավական ինստիտուտ: Որպես սահմանադրական իրավական ինստիտուտ, դրա պատմությունը սկիզբ է առնում սահմանադրական-օրենսդրական նորմատիվ կարգավորման պահից: Այդ պահը դարաշրջանային կտրվածքով համընկնում է պատմության նոր շրջանին, երբ հանրաքվեի իրավական ամրագրումը, հատկապես նորագույն ժամանակաշրջանում, ծավալվում ու զարգանում է: Սակայն կոնկրետ պետության և հասարակության դեպքում հանրաքվեի իրավական ինստիտուտի պատմությունն ունի ժամանակագրական սկզբի առանձնահատկություններ՝ պայմանավորված այդ երկրի պատմաքաղաքական զարգացման առանձնահատկություններով:

Նախնադարյան հասարակության պատմությունը հաստատում է, որ նրա գոյության հազարավոր տարիների ընթացքում նրան բնորոշ կառավարման համակարգը կարելի է բնութագրել որպես անմիջական կառավարում (որում չկա կառավարման սուբյեկտ և օբյեկտ բաժանումը) կամ ուղղակի կառավարում (նախնադարյան ժողովրդավարություն), որում բոլոր կարևոր որոշումներն ընդունում են նախնադարյան հանրույթների կարգավիճակ ունեցող չափահաս անդամները՝ մեծամասնության կառավարման կանոններին համապատասխան: Այդ կառավարումն ուղղակի էր, քանզի այն միջնորդավորված չէր հանրույթից վեր կանգնած ներկայացուցչական կամ ժառանգական հանրային իշխանական մարմիններով: Նման իշխանավարման համակարգում որոշումների ընդունման բարձրագույն ձևը կամ մարմինը համարվում էր նախնադարյան հանրույթների ընդհանուր ժողովը: Գտնում ենք, որ ընդհանուր ժողովները՝ որպես կառավարչական հարցերի լուծման կազմակերպական ձև, շատ նման են հանրաքվեի՝ մեր կողմից սահմանած օպերացիոնալ հասկացությունը: Մասնավորապես հանրաքվեի միջոցով ևս լուծ-

վում են հանրային նշանակության կառավարման հարցերը: Այս նմանությանը հանդերձ, արդի իմաստով հանրաքվեի և ժողովրդական (քննչության) ժողովի միջև կան նաև տարբերություններ, որոնցից հիմնականը հանրաքվեին և ժողովրդական ժողովին մասնակցող անձանց շրջանակն է: Արդի հասարակության մեջ այդ շրջանակն ավելի լայն և ընդգրկուն է, քան ժողովրդական ժողովինը, հատկապես սեռերի հավասարության տեսանկյունից: Սակայն պետք է նկատի ունենալ, որ դա միայն XX դարի նվաճում է:

«Նոր և Նորագույն դարաշրջանում հանրաքվեի վերածնունդը որպես սահմանադրաիրավական ինստիտուտ և անմիջական կառավարման հեռանկարային միտումները» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում ուսումնասիրել ենք գերմանաեվրոպական ժողովուրդների մոտ միջին դարերում հասարակական կառավարման ձևերի կազմավորման և զարգացման շղթան: Հանգել ենք այն մտքին, որ մեկնարկային ձևը եղել է անմիջական կառավարումը, որից անցում է կատարվել դասային-ներկայացուցչական խառը կառավարման համակարգին՝ միջնորդավորված, անուղղակի ձևերի գերակշռությամբ, իսկ բացարձակ միապետություններում մոռացության մատնվեցին ոչ միայն անմիջական, այլ նաև համապետական ներկայացուցչական ձևերը: Այս ընդհանուր օրինաչափությունից բացառություն էին ներկայացուցչական կառավարմամբ իտալական հանրապետությունները և Շվեյցարիան:

Գտնում ենք, որ Շվեյցարիան համարվում է հանրաքվեի հայրենիքը ոչ թե այն պատճառով, որ այստեղ աշխարհում առաջինը հիմնադրել են այդ ինստիտուտը, այլ այն պատճառով, որ այստեղ աշխարհաքաղաքական մի շարք գործոնների ուժով պահպանվել են ուշ հռոմեական և վաղ միջնադարյան կառավարման անմիջական ձևերը:

Անմիջական կառավարման, և հատկապես հանրաքվեի գերակշռությամբ խառը կառավարման համակարգի հաղթարշավը հաստատվում է արդի շրջանի հետինդուստրիալ, տեղեկատվական հասարակությանը բնորոշ նպաստող գործոններով՝ ինֆորմացիոն և հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման տեմպերը և որակը, որոշակի ոլորտներում դրանց հանրայնացման, ինչպես նաև հանրային (պետական) կառավարման թվայնացման և ինֆորմատիզացման միտումները, հանրաքվեի անցկացման էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումը, որոնք գալիս են հաստատելու հանրաքվեի գումարման ֆինանսական և կազմակերպական բարդությունների հաղթահարումը: Դա էլ իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ, այսպես կոչ-

ված, «էլեկտրոնային հանրաքվեները» կարող են վերածվել հասարակական գործերի լուծման եթե ոչ հիմնական, գոնե շատ կարևոր միջոցի:

«Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության ձևի արդյունավետության ու գործունեության իրավական չափանիշների շրջանակը» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում ուսումնասիրվել է հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի հետազոտության համար կարևոր նշանակություն ունեցող արդյունավետության ու գործունեության հիմնական իրավական չափանիշները:

«Համապետական հանրաքվեն՝ որպես երրորդ հանրապետության սահմանադրական իրավական ինստիտուտ. Օրենսդրական ամրագրման ու զարգացման փուլերի հիմնահարցերը» վերտառությամբ 2-րդ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հայաստանի Հանրապետությունում համապետական հանրաքվեի ինստիտուտի իրավական ամրագրման և կայացման փուլերի հիմնահարցը» վերտառությամբ 1-ին պարագրաֆում առաջադրվել են հանրաքվեի զարգացման պատմության պարբերացման տեսականորեն ու պատմականորեն ճշմարիտ չափանիշներ, որոնք հիմք է տալիս հիմնավորելու հանրաքվեի սահմանադրական ինստիտուտի իրավական կարգավորման ու կայացման փուլերի նոր հայեցակարգ:

«ՀՀ անկախության հռչակումը և հանրաքվեի ինստիտուտի օրենսդրական ամրագրումն ու կայացումը (1990-1995 թթ..)» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում արված պատմահամեմատական վերլուծության արդյունքում հեղինակը գտնում է, որ հանրաքվեի իրավական ինստիտուտի պատմության առաջին փուլը՝ 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1991 թ. ապրիլի 2-ը, իր էությունը հետխորհրդային էր, որովհետև ժամանակագրական առումով չէր մտնում Խորհրդային Հայաստանի պետաիրավական պատմության շրջանի մեջ: Մյուս կողմից՝ այդ փուլում գործում էր ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը, որը միակ իրավական աղբյուրն էր հանրապետական հանրաքվեի հարաբերությունների կարգավորման ոլորտում, ուրեմն նշված շրջանում հանրաքվեի իրավական ինստիտուտն իր բովանդակությամբ ևս զուտ խորհրդային երևույթ էր: 1991 թ. մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը ընկած ժամանակամիջոցը, իր բնութագրերով երրորդ հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի օրենսդրական կարգավորման և դրա, ի դեմս անցկացված երկու հանրաքվեների՝ անկախության ու սահմանադրական, գործնական կայացման ժամանա-

կաշրջանն էր: Սակայն դա չէր նշանակում, որ հանրաքվեի ինստիտուտը չուներ կայտարելագործման տեղ:

«Սահմանադրական հանրաքվեի հիմնահարցը և հանրաքվեի իրավական ինստիտուտի հիմնական բնութագրերը ըստ ՀՀ 1995 թ. Սահմանադրության» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը ուսումնասիրել է 1995 թ. Սահմանադրության ընդունման գործընթացը և վերջինիս ընդունմամբ հանրաքվեի իրավական կարգավորման օրենսդրական համակարգը, որը ձեռք բերեց ամբողջական նկարագիր՝ ՀՀ Սահմանադրություն, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը: Վերջինի բովանդակային իրավական չափանիշները Սահմանադրությունը բարելավեց միայն նրանով, որ ներմուծեց սահմանադրական պարտադիր հանրաքվեն

«Տեղական հանրաքվեի սահմանադրական և օրենսդրական կարգավորման էվոլյուցիան երրորդ հանրապետությունում (2002-2019 թթ..)» 3-րդ գլուխը կազմված է երկու պարագրաֆից:

«Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի ընդունումը և դրա արդյունավետության ու ժողովրդավարության հիմնական իրավական չափանիշները» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը ուսումնասիրել է տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտի կայացման առանձնահատկությունները, դրա բովանդակային մաս կազմող էական չափանիշները ու դրանց որակական ցուցանիշները 2002 թ. ընդունված օրենքի համատեքստում:

«Տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտի զարգացման միտումները 2005 և 2015 թթ, սահմանադրական փոփոխությունների համատեքստում» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում ուսումնասիրվել է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը և դրանից հետո ընդունված օրենսդրական փոփոխությունները արդյունավետության և գործունեության էական չափանիշների համատեքստում: Հեղինակը ուսումնասիրելով նաև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը գտել է, որ իրական մոդելն ուներ բարելավման տեղ, հատկապես անցկացման մակարդակների, պարտադիրության, առարկայի, որոշման ընդունման ծայների քանակի, ինչպես նաև հիմնական մի քանի չափանիշների հարցում սահմանադրական կարգավորման որոշակիության ապահովման ուղղությամբ:

«Համապետական հանրաքվեի ժողովրդավարական կայացման հիմնահարցերը սահմանադրական փոփոխությունների համատեքստում» վերտառությամբ 4-րդ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

«Համապետական հանրաքվեի իրավական ինստիտուտի հարցում ընթացիկ օրենսդրական քաղաքականությունը մինչ 2005 թ. և դրա արդյունավետության հիմնական իրավական չափանիշների հարցերը» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը համեմատելով 1991 թ. և 2001 թ. «Հանրաքվեի մասին» օրենքները, ինչպես նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը գտնում է, որ վերջիններն արձանագրել են կայուն հակաժողովրդավարական, հետընթացային միտումներ՝ հանրաքվեն վերածելով հանրային իշխանության քմահաճույքից կախված լրացուցիչ-ֆակուլտատիվ միջոցի՝ զրկելով դրան որպես անմիջական ժողովրդաիշխանության ձևի արդյունավետության ու գործունեության էական օրենսդրական հատկանիշներից:

«2005 թ. սահմանադրական փոփոխությունները և հանրաքվեի իրավական ինստիտուտի արդյունավետության հիմնական իրավական չափանիշների հետընթացը» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում ուսումնասիրվել է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հանրաքվեին վերաբերող սկզբունքային նորամուծությունները. 1) հանրաքվեի հարաբերությունների կարգավորումը բացառապես օրենքին վերապահելը, 2) համազգային հանրաքվեի դրված նախագծի ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի նվազեցումը, որով «ժողովրդավարական» մասնակցության մակարդակը դարձավ 25 %, 3) տեղական հանրաքվեի իրավակարգավորումները, որով մի քանի ուղղություններով բարելավվեց այդ ինստիտուտը՝ բարձրացնելով դրա արդյունավետության և գործունեության ցուցանիշները: Գտնում ենք մնացած ցուցանիշներով սահմանադրական կարգավորումը մնաց իր նվաճումներով չփայլող նախորդի մակարդակին:

«2015 թ. սահմանադրական փոփոխությունները և հանրաքվեի իրավական ինստիտուտի զարգացման արդի ուղղությունները» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը կատարել է Հայեցակարգի, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության և «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի համադրված վերլուծություն, որը ցույց է տալիս, որ հանրաքվեի բովանդակային չափանիշների հարցում այն արձանագրել է էական առաջընթաց: Աճը պայմանավորված է հանրաքվեի դրվող հարցերի շրջանակի ընդլայնմամբ, հանրաքվեի սահմանադրական կարգավորումը մի քանի ուղղություններով որոշակիացմամբ, նախաձեռնող սուբյեկտների շրջանակի արմատական փոփոխությամբ: Ըստ առարկայի նախատեսված 6 տեսակ հանրաքվեներից՝ սահմանադրական ամբողջական և պարտադիր,

սահմանադրական մասնակի և պարտադիր, սահմանադրական մասնակի ֆակուլտատիվ, օրենսդրական ֆակուլտատիվ, միջազգային կազմակերպություններին միանալու, ՀՀ տարածքի փոփոխությանը վերաբերող, ամեն մեկի նախաձեռնողների շրջանակը կոնկրետացված է:

Եզրակացությունում կատարվել են մի շարք ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին.

1. Հանրաքվեն՝ որպես հետազոտության օբյեկտ, ավանդաբար դիտարկվում է սահմանադրական իրավական ինստիտուտ: Սահմանադրությունը նոր և նորագույն դարաշրջանի երևույթ է: Ավելի խորքային և լայն հետազոտությունները հաստատում են, որ հանրաքվեն՝ որպես անմիջական կառավարման ձև, ժամանակագրական առումով շատ ավելի հարուստ պատմություն ունի: Հանրաքվեն գոյություն է ունեցել և ունի երկու կերպ՝ որպես հասարակական ինստիտուտ և որպես սահմանադրաիրավական ինստիտուտ: Հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի պատմությունը սկիզբ է առնում սահմանադրական-օրենսդրական կարգավորման պահից, որը համաշխարհային կտրվածքով համընկնում է պատմության նոր դարաշրջանին: Երկրի պատմաքաղաքական զարգացման կոնկրետ պայմաններում այդ պատմությունն ունի ժամանակագրական սկզբի յուրահատկություններ:

2. Գերմանաեվրոպական ժողովուրդների մոտ միջին դարերում հասարակական կառավարման ձևերի կազմավորման և զարգացման շղթան ցույց է տալիս, որ մեկնարկային ձևը եղել է անմիջական կառավարումը, որից անցում է կատարվել դասային-ներկայացուցչական խառը կառավարման համակարգին՝ միջնորդավորված, անուղղակի ձևերի գերակշռությամբ, իսկ բացարձակ միապետություններում մոռացության մատնվեցին ոչ միայն անմիջական, այլ նաև համապետական ներկայացուցչական ձևերը: Այս ընդհանուր օրինաչափությունից բացառություն էին ներկայացուցչական կառավարմամբ իտալական հանրապետությունները և Շվեյցարիան:

Շվեյցարիան համարվում է հանրաքվեի հայրենիքը ոչ թե այն պատճառով, որ այստեղ աշխարհում առաջինը հիմնադրել են այդ ինստիտուտը, այլ այն պատճառով, որ այստեղ աշխարհաքաղաքական մի շարք գործոնների ուժով պահպանվել են ուշ հռոմեական և վաղ միջնադարյան կառավարման անմիջական ձևերը: Շվեյցարիայում հանրաքվեանման սոցիալական ինստիտուտը էվոլյուցիոն զարգացման միջոցով վերածվել է նոր շրջանի հանրաքվեի սահմանադրաիրավական ինստիտուտի:

Հանրային կառավարման պատմական զարգացման համատեքստում Եվրոպայում տեղի ունեցավ անմիջական կառավարման՝ որպես ժողովրդաիշխանության ձևի, ներառյալ հանրաքվեի վերածնունդ, այնուհետև՝ դրա համընդհանրացում, համաշխարհայնացում: Անմիջական կառավարման, և հատկապես հանրաքվեի գերակշռությամբ խառը կառավարման համակարգի հաղթարշավը հաստատվում է արդի շրջանի հետինդուստրիալ, տեղեկատվական հասարակությանը բնորոշ նպաստող գործոններով՝ ինֆորմացիոն և հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման տեմպերը և որակը, որոշակի ոլորտներում դրանց հանրայնացման, ինչպես նաև հանրային (պետական) կառավարման թվայնացման և ինֆորմատիզացման միտումները, հանրաքվեի անցկացման էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումը, որոնք գալիս են հաստատելու հանրաքվեի անցկացման ֆինանսական և կազմակերպական բարդությունների հաղթահարումը: Դա էլ իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ, այսպես կոչված, «էլեկտրոնային հանրաքվեները» կարող են վերածվել հասարակական գործերի լուծման եթե ոչ հիմնական, գոնե շատ կարևոր միջոցի:

3. Հանրաքվեի՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտի ձևավորման ու կայացման պատմության հիմնահարցերն արդի շրջանի եզակի սահմանադրական-իրավական հետազոտություններում կառուցված են սխալ հայեցակարգային հիմքերով: Հանրաքվեի զարգացման պատմության պարբերացման տեսականորեն ու պատմականորեն ճշմարիտ չափանիշների առաջադրումը հիմք է տալիս հիմնավորելու հանրաքվեի սահմանադրական ինստիտուտի իրավական կարգավորման ու կայացման փուլերի նոր հայեցակարգ: Համաձայն այդ հայեցակարգի՝ հանրաքվեի ինստիտուտի զարգացումը ՀՀ-ում անցել է հինգ փուլ:

4. Հանրաքվեի՝ որպես իրավական ինստիտուտի հետազոտության համար կարևոր նշանակություն ունեն դրա արդյունավետության ու գործունեության հիմնական իրավական չափանիշները: Հանրաքվեի իդեալական մոդելին պետք է բնորոշ լինի հիմնական, կարևոր նշանակություն ունեցող բովանդակային չափանիշներ, սկզբունքային հարցերի հիմունքների պատշաճ սահմանադրական ամրագրում: Այդ հատկանիշների և դրանք բնութագրող չափանիշների տեսական վերլուծությունը, օգտագործելով գործնական նպատակներով, հնարավոր է գնահատել որևէ երկրում հանրաքվեի կոնկրետ մոդելը:

Այս մոտեցման հիման վրա կարելի է կառուցել, օրինակ, համազգային հանրաքվեի իդեալական մոդելի և իրական մոդելի համեմատական աղյուսակ: «Իդեալական մոդելը» հանրաքվեի տարբերակն է, որում հանրաքվեի բովանդակությունը կազմող հիմնական իրավական չափանիշները դրսևորված են առավել լրիվությամբ: Ստուգելով դրանց դրսևորումը իրական մոդելում՝ հնարավոր է ախտորոշել դրա արդյունավետության և որպես իրավական ինստիտուտի գործունեության աստիճանը, գոյության նպատակահարմարությունը, ինչպես նաև նախանշել հանրաքվեի ինստիտուտի կատարելագործման սահմանադրական-օրենսդրական ուղիները:

6. 1991 թ. ապրիլի 2-ի «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքն ազդարարեց հանրաքվեի իրավական ինստիտուտի զարգացման նոր փուլի սկիզբը: Այդ օրենքը հաջորդ փուլի օրենքների հետ համեմատած բավականին առաջադիմական էր: Հետևաբար, 1991 թ. մինչ 1995 թ. Սահմանադրության ընդունումը ընկած ժամանակամիջոցը, իր բնութագրերով երրորդ հանրապետությունում հանրաքվեի իրավական ինստիտուտի օրենսդրական կարգավորման և դրա, ի դեմս անցկացված երկու հանրաքվեների՝ անկախության ու սահմանադրական, գործնական կայացման ժամանակաշրջանն էր: Սակայն դա չէր նշանակում, որ հանրաքվեի ինստիտուտը չուներ կատարելագործման տեղ:

7. 1995 թ. Սահմանադրության ընդունումն ազդարարեց նոր տեսակի հանրաքվեի՝ սահմանադրական պարտադիր հանրաքվեի ինստիտուտը: Դրանում ժողովրդաիշխանության սկզբունքը ստացավ իր պատշաճ բարձրագույն ամրագրումը: Սահմանադրությունը հանրային իշխանության իրականացման զուտ պետական կառավարման համակարգից անցում կատարեց, այսպես կոչված, խառը իշխանակազմակերպման համակարգին, որն, իր հիմքում ունենալով ժողովրդաիշխանության սկզբունքը, իրականացվում էր երկու առանձին կառուցակարգերի միջոցով՝ անմիջական-ուղղակի և միջնորդավորված-անուղղակի: 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ հանրաքվեի իրավական կարգավորման օրենսդրական համակարգը ձեռք բերեց ամբողջական նկարագիր՝ ՀՀ Սահմանադրություն, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը: Սակայն հանրաքվեի սահմանադրական կարգավորումը շատ ընդհանուր էր, առանց դրա հիմունքները մանրամասնելու, ինչը ստեղծում էր գործող օրենսդրության մեջ օրենսդրի կողմից հակաժողովրդավարական օրենսդրական նորամուծություններ կատարելու, հանրաքվեի էության օրենսդրական աղճատման վտանգներ:

8. 1995 թ. Սահմանադրությամբ հանրաքվեի իրավական կարգավորման բացթողումներն իրենց զգացնել տվեցին XX հազարամյակի սկզբին: 2001 թ., ընդունվեց մի օրենք, որը չէր բավարարում հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության բարձրագույն ձևի արդյունավետության գրեթե բոլոր հիմնական չափանիշներին: 1991 թ. և 2001 թ. «Հանրաքվեի մասին» օրենքների, ինչպես նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության ցուցանիշների համեմատությունը հաստատում է, որ վերջիններն արձանագրել են կայուն հակաժողովրդավարական, հետընթացային միտումներ՝ հանրաքվեն վերածելով հանրային իշխանության քմահաճույքից կախված լրացուցիչ-ֆակուլտատիվ միջոցի:

Թերությունների համատեքստում ակնկալիքները բավականին մեծ էին 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հանրաքվեին վերաբերող սկզբունքային նորամուծություններն էին. 1) հանրաքվեի հարաբերությունների կարգավորումը բացառապես օրենքին վերապահելը, 2) համազգային հանրաքվեի դրված նախագծի ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի նվազեցումը, որով «ժողովրդավարական» մասնակցության մակարդակը դարձավ 25 %, 3) տեղական հանրաքվեի իրավակարգավորումները, որով մի քանի ուղղություններով բարելավվեց այդ ինստիտուտը՝ բարձրացնելով դրա արդյունավետության և գործունեության ցուցանիշները: Մնացած ցուցանիշներով սահմանադրական կարգավորումը մնաց իր նվաճումներով չփայլող նախորդի մակարդակին:

9. Ամփոփելով տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտի կայացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ դրա բովանդակային մաս կազմող էական չափանիշների ու դրանց որակական ցուցանիշների տեսանկյունից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ գոյության առաջին կեսին տեղական հանրաքվեն, որպես ժողովրդաիշխանության անմիջական ձև, անտեսված էր: Միայն 2002 թ.ից՝ սկզբում օրենսդրական, իսկ այնուհետև սահմանադրական մակարդակներում իրավաբանորեն ամրագրվեց և կարգավորվեց տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը և դրանից հետո ընդունված օրենսդրական փոփոխությունները բարելավեցին տեղական հանրաքվեի ինստիտուտը մի քանի ուղղություններով՝ բարձրացնելով դրա արդյունավետության և գործունեության միավորները:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կարարելագործեց միայն տեղական հանրաքվեի հռչակագրային-իրավական որոշ հիմքեր: Հանրաքվեի իրական մոդելի արդյունավետության և գործունեության բուն չափանիշների հարցում այն աճ չի գրանցել: Իրական մոդելն ուներ բարելավման տեղ, հատկապես անցկացման մակարդակների, պարտադիրության, առարկայի, որոշման ընդունման ծայների քանակի, ինչպես նաև հիմնական մի քանի չափանիշների հարցում սահմանադրական կարգավորման որոշակիության ապահովման ուղղությամբ:

2018 թ. հունիսի 13-ի «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ի համեմատ 2002 թ. համանման օրենքի գրանցել է արդյունավետության չափանիշների աճ: Աճը պայմանավորված է մայրաքաղաքային և վստահության հանրաքվեների իրավական հնարավորության ճանաչմամբ:

10. ՀՀ-ում քաղաքական, սոցիալ-տնտեսական որոշակի անբարենպաստ պայմանների ու գործոնների ճնշման տակ հանրաքվեի իրավական ինստիտուտն ապրեց ոչ թե էվոլյուցիոն իրավական զարգացման, ժողովրդավարացման ընթացք, այլ հետընթաց, որին բնորոշ է հանրաքվեի էության խեղաթյուրում: Անցնելով սահմանադրական ձևափոխումների մի քանի փուլերով՝ ժողովուրդը չկարողացավ հասնել իրեն պատկանող իշխանության իրականացման պատշաճ ձևերի իրավական ամրագրման կամ եղածները շտկելուն, իր իշխանությունը դրսևորելու իրավական հնարավորություններին: Ի սկզբանե սահմանադրական կարգավորման հիմքում դրված իշխանակենտրոն կառավարման համակարգը դարձավ անվերահսկելի, ինչի պատճառներից մեկն էլ հանրաքվեի իրավական ինստիտուտի պետական կառավարմանը լրացնող, ձևական, բովանդակազրկված վիճակն էր:

11. 2015 թ. Սահմանադրական բարեփոխումների ճանապարհին կարևոր միջոցառում էր ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակումը: Ամրագրելով «անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության հնարավորությունների իրացման անհրաժեշտ համամասնականության» սահմանադրական բարեփոխումների սկզբունքը, որոշ առումներով նեղացնելով հանրաքվեի ինստիտուտի բարեփոխման ուղղությունների շրջանակը՝ որդեգրել էր հանրաքվեի օբյեկտների (առարկայի) բովանդակության ու նախաձեռնող սուբյեկտների շրջանակի հստակեցման խնդիրները (ուղղությունները):

Հայեցակարգի, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության և «Հան-

րաքվեի մասին» սահմանադրական օրենքի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրաքվեի բովանդակային չափանիշների հարցում այն արձանագրեց էական առաջընթաց: Աճը պայմանավորված է հանրաքվեի դրվող հարցերի շրջանակի ընդլայնմամբ, հանրաքվեի սահմանադրական կարգավորումը մի քանի ուղղություններով որոշակիացմամբ, նախաձեռնող սուբյեկտների շրջանակի արմատական փոփոխությամբ: Ըստ առարկայի նախատեսված 6 տեսակ հանրաքվեներից՝ սահմանադրական ամբողջական և պարտադիր, սահմանադրական մասնակի և պարտադիր, սահմանադրական մասնակի ֆակուլտատիվ, օրենսդրական ֆակուլտատիվ, միջազգային կազմակերպություններին միանալու, ՀՀ տարածքի փոփոխությանը վերաբերող ամեն մեկի նախաձեռնողների շրջանակը կոնկրետացված է:

Չլուծված խնդիրներից են քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի և օրենսդրական ֆակուլտատիվ հանրաքվեի նախաձեռնողների քանակի բարձր շեմը և ընդհակառակը, որոշման ընդունման համար անհրաժեշտ ցածր շեմը, որի լուծման միջոցը պետք է լինի եթե ոչ շեմի բարձրացումը, գոնե շեմի տարբերակումը ամեն մի տեսակի հանրաքվեի համար: Հանրաքվեի արդյունքների իրավական նշանակության ոլորտում անտեսված է խորհրդատվական հանրաքվեի արդյունքների հարցը, բաց է մնում միջազգային կազմակերպություններին միանալու և տարածքի փոփոխության հարցով հանրաքվեների արդյունքների իրավական ուժի, գործողության հարցը: Անհրաժեշտ ենք համարում նաև պետական մարմիններին և պաշտոնատար անձանց անվստահություն հայտնելու հանրաքվեն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1) Մելիքսեթյան Լ. Հանրաքվեի որպես անմիջական ժողովրդաիշխանության ձևի արդյունավետության իրավական չափանիշների շրջանակը Արդարադատություն գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2018, թիվ 1(42), էջեր 40-46:

2) Մելիքսեթյան Լ. Հանրաքվեի սոցիալական իրավական բաղադրիչները իրավական մշակույթի պատմության համատեքստում, Օրինականություն գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2017, թիվ 100, էջեր 55-60:

3) Մելիքսեթյան Լ., «Հանրաքվեի իրավական ինստիտուտի օրենսդրական ամրագրումն ու կայացումը 1991-1995 թթ.», ԵՊՀ իրավագիտության ֆա-

կուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2018, թիվ 1(1), էջեր 96-111:

4) Մելիքսեթյան Լ., «ՀՀ-ում համապետական հանրաքվեի ինստիտուտի իրավական ամրագրման ու կայացման փուլերի հիմնահարցը», Պետություն և իրավունք, Երևան, 2017, թիվ 4(78), էջեր 5-15:

5) Մելիքսեթյան Լ., «Տեղական հանրաքվեի սահմանադրական և օրենսդրական կարգավորման էվոլյուցիան Հայաստանի Երրորդ Հանրապետությունում», Օրինականություն գիտամեթոդական ամսագիր, Երևան 2018, թիվ 107 էջեր 31-43:

6) Մելիքսեթյան Լ., «Հանրաքվեի որպես սոցիալական ինստիտուտի կայացման հիմնահարցը հանրային իշխանության ձևավորման պատմական խորապատկերում», Հանրային կառավարում գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2018, թիվ 3-4, էջեր 127-136:

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ ИНСТИТУТА РЕФЕРЕНДУМА КАК ФОРМЫ НЕПОСРЕДСТВЕННОГО НАРОДОВЛАСТИЯ

РЕЗЮМЕ

В современной эпохе, пожалуй, очевидно появление определенных сложностей, в отдельных случаях и провалов, во внутригосударственных измерениях в представительном управлении, а в надгосударственных измерениях в деятельности международных структур по надгосударственному управлению, причем комплексный анализ свидетельствует о том, что даже сформированные структуры в прогрессивных и демократических странах не в силах полностью и комплексно решить стоящие перед ними актуальные проблемы. Это отчасти объясняется нынешним переменчивым характером правовой системы и правовых позиций, что стало более заметным на этапе современных развитий, когда практически невозможно с той же скоростью привести структуры в соответствие с формирующимися правовыми требованиями. Недостаточная жизнеспособность сформировавшихся основных структур и процедур, отчасти их уязвимость стала заметна и в контексте происходящих политических событий в Армении в 2018 году. В частности, всенародное движение выдвинуло такие требования, которые практически невозможно было решать с применением текущей политико-правовой системы. Очевидно, что недовольство от общественной власти было направлено не только на принятие желаемых решений, но и в наши дни, преимущественно, проявляется беспрецедентный рост тенденций принятия решений непосредственным путем. В общем, недостаток непосредственного народовластия порождает взрывоопасную атмосферу бесконтрольности и безответственности государственной власти, основными средствами преодоления которой являются превращение народа в носителя государственности, достижение гармоничного равновесия непосредственных и представительных форм народовластия.

Еще одна сторона актуальности темы исследования связана с проявлениями теоретического нигилизма к референдуму, в частности, многие теоретики предлагают «не переходить границу», не принижать представительную систему. Изначально можно было и согласиться с такими подходами, если

бы представительное управление (государство вообще) всегда не переходила границу, превращая себя в неконтролируемую, «самодостаточную» систему, отклоняясь от общих общественных и государственных интересов.

Научная новизна диссертации состоит в том, что впервые референдум рассматривается не как правовой институт новой эпохи, а как явление, которое всегда сопровождало историю человечества. Выделены этапы, построенные на научных критериях правовой истории института референдума в Республике Армения. В диссертации изучена конституционная и правовая история правового института референдума по выделенному поэтапному разделению.

Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как представленные предложения и умозаключения могут быть использованы на курсах конституционного права, общественного управления, истории права и в научных исследованиях, касающихся этих вопросов.

Диссертация подготовлена на кафедре общественного права Академии государственного управления РА, где были осуществлены обсуждения и гарантии работы. Основные положения диссертации отражены в ряде научных статей автора.

Meliksetyan Lilit Vahei

IMPROVEMENT OF TOPICAL ISSUES OF THE INSTITUTION OF REFERENDUM AS A FORM OF DIRECT DEMOCRACY

SUMMARY

In current age, perhaps, it is obvious that certain difficulties, in some cases and failures, appear in the internal dimensions in representative governance, and in the supranational dimensions in the activities of international structures for supranational governance. A comprehensive analysis shows that even developing and progressive countries with formed structures are not able to fully solve the actual problems facing them. This is partly due to the current changeable nature of the legal system and legal positions, which has become more noticeable at the stage of modern developments, when it is almost impossible to bring structures in line with emerging legal requirements at the same speed. The lack of viability of the main structures and procedures that have been formed and some of their vulnerability, has also become apparent in the context of the ongoing political events in Armenia in 2018. The popular movement put forward such demands which were almost impossible to solve using the current political and legal system. It is obvious that the discontent from the public authorities was directed not only in making the desired decisions, but also nowadays is mainly manifested by an unprecedented increase in the trends of making decisions directly. In General, the lack of direct democracy creates an explosive atmosphere of uncontrolled and irresponsible state power; the main methods of overcoming are the transformation of people into a carrier of statehood, achieving a harmonious balance of direct and representative forms of democracy.

Another aspect of relevance of the research topic is related to manifestations of theoretical nihilism towards the referendum. Generally, many theorists suggest "not to cross the border", not to belittle the representative system. It will be acceptable if representative government itself (the state in General) will not always cross the border, turning itself into an uncontrolled, «self-sufficient» system, deviating from the general public and state interests.

The scientific novelty of the thesis is that it is the first time the referendum is considered not as a legal institution of a new era, but as a phenomenon that

has always been accompanied in a history of mankind. Highlighted the stages based on the scientific criteria of the legal history of the referendum institute in the Republic of Armenia, the author examines the constitutional and legal history of the legal institution of the referendum on the allocated step-by-step division.

The dissertation has not only theoretical, but also practical meaning, the presented proposals and conclusions can be used in courses of constitutional law, public administration and history of law and in scientific research related to issues of referendum.

The thesis is prepared at the department of public law of the Academy of public administration of the Republic of Armenia, where the discussion and presentation of the work have been carried out. The main provisions of the dissertation are reflected in a number of scientific articles of the author.

S. Oshin



